ՆՈՐԻՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԻԱՅԻ ՄԱՖԱԼԴԱ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՄԷՋ

ԹԻԹԱՐԱՑ Յարկը մայիս 24-ին պատիւ ունեցաւ հիւրընկալելու Ն. Ա. Բարձրութիւն Շնորհափայլ Իշխանուհին Մաֆալտա, Դուստր Իտալիոյ այժմեան Վեհապետին։

Նորին Բարձրութիւնը իրեն հետևորդ ունէր Մարքիզուհին Ճիաննակալի տէլլա Լոճճիա, Կոմսուհի Մաղիլտէ Պրուսքի Ֆալկարի և Արքունի հազարապետ Մարիոյ Նարտի։ Երեկոյեան ժամը 4-ին էր՝ երբ հասաւ շրջիկակոյկը և ընդունուեցաւ Ն. Ա. Բարձրութիւնը վեր. Հայրերէն։ Այս առաջին անգամն էր որ կ'այցելէր ի Ս. Ղազար։ Նախ առաջնորդուեցաւ եկեղեցի՝ ուր յատուկ պատրաստուած աղօթարանի վրայ ծնրադիր աղօթեց։ Ապա մեծ հաճոյքով դիտեց Ն. Վեհ. Մարգարիտա Մայր թագուհւոյն զոյգ արքայական ընծաները՝ Աւագ Խորանի պերճաձեղ մեծ վարագոյրն ու Տիրամօր Խորանին ուխտական կանթեղը։ Աւանդատան մէջ ամենամեծ հիացմունքի առարկայ դարձած էին շքեղ ու թանկագին սպասներն ու եկեղեցական ոսկեղրուագ և գեղահիւս զգեստները։ Այցելեց ապա Թանգարանն ու Գրատունը՝ ուր և ստորագրեց Ոսկեգրքին մէջ իր անունը «Mafalda di Savoia»։

Բնագիտական Դահլիճին մէջ տեղի ունեցան պատուասիրութիւններ, ուսկից առաջնորդուեցաւ յետոյ դէպի Տպարան։ Հոս ընծայուեցան Իշխանուհւոյն՝ զանազան գրքեր և Արքայական ընտանեաց լուսանկարը՝ որ նոյն ժամուն տպագրուեցաւ ի պատիւ իրեն։ Շատ ախորժեցաւ նաև վանքիս Քառանկիւն բուրաստանը, պարտէզն և Ութանկիւն բարձրաւանդակը. քանի՛ցս ինքն իսկ լուսանկարեց կղզեկիս զանազան տեսարանները. երկու անգամ ևս լուսանկարուեցաւ իր հետևորդներուն կողմանէ։

Այսպէս $1^1/_2$ ժամ տևող հաճելի ժամանցէն վերջ՝ մեծ գոհունակութեամբ ու քաղցր տպաւորութեան տակ հրաժեշտ առաւ Ն. Ա. Բ. Իշխանուհին Մաֆալտա, շնորհապարտ թողլով զՄիաբանութիւնս՝ զոր պատուեց իր բարեացակամ այցելութեամբ։

ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@